

ԽՈՐԵՆԱՑՈՒ ԵՐԿՈՒ ԱՂԲՅՈՒՐԻ ԹՎԱԳՐՄԱՆ ՇՈՒՐՋԸ

Գ. Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» գրության ժամանակի հարցը բազմաթիվ վեճերի առարկա է եղել սկսած XIX դարի սկզբից¹։ Այժմ կրկին գերիշխող է դարձել նրա գործի արժանահավատության և V դարին (80-ական թթ.) պատկանելու մասին տեսակետը²։ Սակայն որոշ հայագետներ վերջին ժամանակներս փորձում են վերականգնացնել Խորենացու ավելի ուշ ժամանակի հեղինակ լինելու վարկածը³։ Ճիշտ է, նշված հեղինակների բերած բոլոր փաստարկները կարծես բախվում են մի զորավոր փաստարկի՝ նորահայտ (չպահպանված, սակայն վերականգնվող) Աթանաս Տարոնացու «Ժամանակագրությանը», որը ոչ միայն Խորենացու «Պատմությունը» որպես աղբյուր է օգտագործել, այլև պարունակում է հետևյալ վրկայությունը. «ՆՂԴ (474) Մովսէս Խորենացի փիլիսոփա և մատենագիր»⁴։ Մենք նպատակ չենք հետապնդում դատելու, թե ինչքանով է Ա. Մաթեվոսյանի նշված հայտնագործությունը փարատում Խորենացու «Պատմության» թվագրման հետ կապված բոլոր կասկածները, սակայն մեր կարծիքով, բանասերների պարտքն է մնում պարզություն մտցնել Խորենացու օգտագործած որոշ աղբյուրների գրության ժամանակի վերաբերյալ գոյություն ունեցող տարակարծիքության մեջ։

Խորենացու օգտագործած «երկրորդական» աղբյուրների⁵ շարքում կան բազմաթիվ թարգմանական հուշարձաններ, որոնց մեջ նշանակալից տեղ են զբաղում Փիլոն Ալեքսանդրացու (Եբրայեցու) երկերի թարգմանությունները։

¹ Հարցի պատմությունը տե՛ս Մ. Արեգյան. Հայոց հին գրականություն. գիրք 1.—Մ. Արեգյան. Երկեր. Գ. Գ, Երևան, 1968, էջ 282—286; Տե՛ս նաև՝ Գ. Խ. Սարգսյան. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. Երևան, 1966, էջ 8—10։

² Գ. Խ. Սարգսյան. նշվ. աշխ., էջ 11; Նույնի՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը. Երևան, 1965, էջ 8. Հմտ. նաև՝ Հայ ժողովրդի պատմություն. Կ. 2, Երևան, 1984, էջ 454—455։

³ Cyril Toumanoff. On the Date of Pseudo-Moses of Chorene.—Handes Amsorya, 1961, pp. 467—476; Moses Chorenatsi. History of the Armenians. Translation and Commentary by R. W. Thomson. Cambridge (Mass.), London (England), 1978, pp. 10—56; M. van Esbroeck. Legends about Constantine in Armenian.—In: Classical Armenian Culture. Ed. by Th. J. Samuelian.—Armenian Texts and Studies, 4, University of Pennsylvania, 1982, p. 80. Իր մի այլ հոդվածում նույն հեղինակը ցույց է տալիս, որ 'Բարդուղիմեոս առաքյալի մասին տեղեկությունը (2. 84) Մովսես Խորենացին բաղել է VII—VIII դդ. մի հունական աղբյուրից, ճիշտ է, ձեռնագրի մնացորդներից, ժամանակի հարցը քննարկելուց, համարելով, որ տվյալ հատվածը կարող է և ուշ ընթացիկություն լինել (The Rise of Saint Bartholomew's Cult in Armenia from Seventh to the Thirteenth Centuries.—In: Medieval Armenian Culture. Ed. by Th. J. Samuelian and Michael Stone.—Armenian Texts and Studies, 6, University of Pennsylvania, 1984, pp. 161—178)։

⁴ Տե՛ս Ա. Ս. Մաթեվոսյան. Մովսես Խորենացին և Աթանաս Տարոնացու «Ժամանակագրությունը».— «Պատմա-բանասիրական հանդես», 1989, № 1, էջ 220—234 (474 թ. հեղինակը մեկնաբանում է որպես «Պատմություն» ավարտելու տարեթիվ, տե՛ս էջ 226)։

⁵ Г. Хаятрянж. Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского. Т. I, М., 1903, с. 372—374; Տե՛ս նաև Thomson. Op. cit.

Դոանը Վերկրորդական» աղբյուր են ծառայել այն իմաստով, որ ի տարբերություն «Հիմնական» աղբյուրների, որոնցից հեղինակը պատմական տեղեկություններ է քաղել, այդ Վերկրորդական աղբյուրները «ոճական նյութ» են մատակարարել նրան⁶:

Խորհնացին օգտվել է նաև «Պիտոյից գրքից»⁷: Ահա երեք զուգահեռ, որ մեզ հաջողվել է նկատել՝ ցույց տալով, որ «Պիտոյից գրքի» բնագիրն առաջնային է (տե՛ս նաև փոխառյալ հունարանությունները)⁸:

⁶ Г. Халатянц. Указ. соч., с. 373, հմմտ. նաև 2-րդ հատորի համապատասխան հատվածները, որոնցում բնագրային զուգահեռներ են բերվում: Նույնպիսի աղբյուր են հանդիսացել Փիլոնի թարգմանությունները և Նդիշեի «Պատմության» համար. տե՛ս Ռ. Կլուլեսերյան. Նդիշե, քննական ուսումնասիրություն. Վիեննա, 1909, էջ 151—174: Elishe History of Vardan and the Armenian War. Translation and Commentary by R. W. Thomson. Cambridge (Mass.), London (England), 1982.—Introduction, pp. 21—22: Մակայն այստեղ, ի տարբերություն Խորհնացու, նաև գաղափարական ազդեցություն է դիտվում (R. W. Thomson. Elishe's History of Vardan: New Light from Old Sources. Classical Armenian Culture, pp. 42—43): Ուրեմն, Փիլոնի թարգմանությունների թվագրումը նշանակություն ունի նաև Նդիշեի ժամանակի դեռևս վիճարկվող հարցի լուծման համար. հարցի պատմությունը տե՛ս Մ. Արեղյան. Նշվ. աշխ., էջ 325—328, նորագույն հետազոտողներից, օրինակ, Քոմստոնը Նդիշեի ժամանակի մասին որոշակի կարծիք չի հայտնում, սակայն անհավանական է համարում, որ նա VI դարից վաղ ապրած լիներ (Elishe History of Vardan. Introduction, p. 29):

⁷ Մրբոյ բերրողհօր մերոյ Մովսէսի Խորհնացույ Գիրք Պիտոյից, աշխատասիրութեամբ Յ. Զօհրապեան. Վենետիկ, 1796: Տե՛ս նաև նոր քննական բնագիրն ուսումնասիրությամբ հանդերձ՝ Գիրք պիտոյից, աշխատասիրությամբ Գոհար Մուրադյանի. Երևան, 1991 (այնուհետև՝ Գիրք պիտոյից). այստեղ կասկածի տակ է դրված այդ հուշարձանի՝ ավանդությամբ Խորհնացուն վերագրված լինելու արժանահավատությունը (տե՛ս Առաջաբան, էջ 14—18):

⁸ Մ. Արեղյանը ժամանակին ենթադրել է, որ Խորհնացին, բացի «Պիտոյից գրքի» հեղինակը լինելուց, գործնականորեն կիրառել է նրանում շարադրված «ներբողեան» գրելու կանոնները (Մ. Արեղյան. Նշվ. աշխ., էջ 301—305): Սակայն այդ ենթադրությունը համոզելի չի թվում, քանի որ հրահանգով պահանջվող կետերից շատերն իրագործված չեն: Էլ ավելի անհամոզելի է թվում մեզ Մ. Արեղյանի փորձը նույնացնելու Խորհնացու բնագրից առանձնացրած «Հիւսումն պիտոյից» բառակապակցությունը «Պիտոյից գրքի» հետ (մանավանդ որ նրա սկզբնական վերնագիրն այսպիսին չի եղել, տե՛ս A. Baumgartner. Über das Buch „Die Chrie...—ZDMG, Bd 40, 1886, S. 465): Այսպես, խոստանալով տալ մեր ազգի նախնիների ցուցակը (1. 19), Խորհնացին ավելացնում է. «Եւ այսոցիկ այսպես կարդելոց... սկսայց քեզ եւ որ ինչ զկնի այնոցիկ ի հիւսման պատմութենէ պիտոյից»: Այս հատվածն իրոք դժվարություն է հարուցում մեկնաբանման համար, և պետք է նշել, որ թարգմանիչները փորձել են շքանցել այն ոչ ճշգրիտ թարգմանությամբ (օրինակ, տե՛ս Մ. Էմիլի թարգմանությունը՝ История Арменни Монсея Хоренского, М., 1893, էջ 32): Մ. Արեղյանի տեսակետն արտացոլվել է Ստ. Մալխասյանցի թարգմանության մեջ (Մովսէս Խորհնացի. Հայոց պատմություն. Երևան, 1981, էջ 126): Արդ մեկնաբանությունը քննադատել է Բ. Գևորգյանը. մեր կարծիքով, շատ ավելի ճիշտ հասկանալով բնագիրը. «Կը սկսեմ այն բաներից, որոնք սորանցից յետոյ պիտոյ են պատմութեանս հիւսմանը» (Բ. Գևորգյան. Խորհնացուն Խորհնացով պետք է հասկանալ. Էջմիածին, 1999 էջ 26): Մենք առաջադիմում ենք մի փոքր ճշգրտում մտցնել այդ մեկնաբանության մեջ՝ ընդունելով պատմութեան (այսինքն՝ պատմութեան) տարբերությունը (Մովսէս Խորհնացի. Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Մ. Արեղյան և Ս. Յարութիւնեան. Տփղիս, 1913, էջ 57). «Կսկսեմ (պատմել) քեզ և այն, ինչ սրանցից հետո է, պատմություն հյուսելու անհրաժեշտությունից (ելնելով)», այսինքն «ի պատմութենէ» բացառական հուղի՛փ փոխարեն՝ «ի պիտոյից»: Հակադրված է «կարգել»՝ «հերթականությամբ դասավորել» և «հիւսել»՝ «կապակցված պատմություն շարադրել» հմմտ. «ի պատմութեանս հիւսել» (3. 65), նաև հուն. πλέγω «հյուսել» և «(որդերգության) բովանդակությունը հորինել» և πλοαγή, «հյուսվածք» և «(գրամատիկ) սլոսեի կազմակերպումը» (Liddell, Scott. Greek-English Lexicon, 1966, s. v.).

Գիրք պիտոյից

1. «...Շինարարներն տան և դաւառի պատճառով» (I. Գ. 4), «քաղաքաց պայծառութեան ամենագեղեցիկ պատճառ և իւրաքանչիւր շինարարներն տանց... օճառք խորին խաղաղութեան» (I. 2. 4), «Գիտնականներն» շինարարներն և յայտ խաղաղութեան քաղաքաց լինէր պատճառ...» (II. 1. ա):

(Պիտոյից գրքում շատ տարածված մի մտտիվի տարատեսակներն են. տե՛ս Գիրք պիտոյից, Ժանոթագրութիւնների բաժնի ներածական հոդվածը):

2. «Արքայց փոխանակ կենսականի դմահաշունչ դեղ» (IV. 2. բ):

«ի կենացն գեղ դմահացուն խառնեալ» (3. 24):

(այս միտքն իր համարյա բառացի զուգահեռն ունի լիրանիոսի մտտ պահպանված նախօրինակում)⁹:

3. Աղեքսանդրոս Մակեդոնացի հարցեալ յամենեւն. «Եւր են քո գանձք», «Գիրքիսն (τοῦς φιλοῦς) ցուցեալ, աւսաց. քի սոսա» (I. 2՝ հունարենից թարգմանված վերնագիր է):

«...ք ինչ օգտակարագոյն ի կեանս աշխարհիս ի գիցն մեզ պարգևեալ քան գիրքիսն» (1. 28):

Ինչպես Փիլոնի թարգմանութիւնները, այնպես էլ «Պիտոյից գիրքը» դասվում են հունարան դպրոցի գործունեության առաջին շրջանի «Բարգամանութիւնների» շարքին: Մանանդյանը միավորելով դրանք Գիրքիսիոս Թրակացու «Քերականութիւն» թարգմանության հետ՝ այդ երեքի համար ընդհանուր բառերի մի մեծ ցուցակ է բերում (սակայն ոչ լրիվ) և նույնիսկ մատնանշում Փիլոնի և «Պիտոյից գրքի» երկու բնագրական զուգահեռն¹⁰: Սակայն կար երկու օբյեկտիվ խոչընդոտ, որ թույլ չտվեց շ. Մանանդյանին ճիշտ եզրակացության հանգելու այդ երկու բնագրերի իրական կապի մասին. ա) «Պիտոյից գիրքը» դեռևս անբավարար էր ուսումնասիրված, և թարգմանական էին համարվում նրա «հնագույն մասերը», այսինքն՝ «տեսութիւնների ու վարժութիւնների մեծագույն մասը»¹¹, բ) շ. Մանանդյանն իր բերած ցուցակում չի առանձնացրել նորակազմ, այսինքն թարգմանիչ ձեռքով կերտված բառերը և չի բերել վերջիններիս հունարեն համապատասխանները (բացառությամբ մի քանի նախածանցավոր բառերի, որ հատուկ քննութիւն են ենթարկված 112—115 էջերում): Վերջին հանգամանքը բացատրվում է նրանով, որ նա ձեռքի տակ չի ունեցել ոչ միայն Փիլոնի հունարեն սկզբնագիրը, այլև «1892 թ. վենետիկում լույս տեսած Փիլոնի ճառերի հրատարակութիւնը»¹², այսինքն հենց «Փիլոնի Հերարայեցոյ ճառք, որոց հելլեն բնագիրք հասին առ մեզ» հատորը:

Մենք փորձել ենք հաղթահարել նշված խոչընդոտները. ա) համեմատելով «Պիտոյից գրքի» բնագիրը նրա բոլոր հնարավոր հունարեն սկզբնաղբյուրների հոտ և ցույց տալով, որ թարգմանական է նրա բնագրի փոքրագույն մասը՝ տեսական հրահանգները¹³, իսկ նախակրթութիւնների շարա-

9 Տե՛ս Գ. Մուրադյան. «Պիտոյից գիրքը» և նրա հունարեն նախօրինակը.— «Պատմա-բանասիրական հանգես», 1984, № 3, էջ 119. Կա Գիրք պիտոյից, Ժան. IV. 32:

10 շ. Մանանդյան. Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները. Վենետիկ, 1828, էջ 107—111:

11 Նույն տեղում, էջ 115, տե՛ս նաև Ժան. 1:

12 Նույն տեղում, էջ 108, տե՛ս նաև Ժան. 1:

13 Գ. Մուրադյան. նշվ. աշխ., էջ 13, Գիրք պիտոյից, տե՛ս Ժանոթագրութիւնների լրածնի ներածական հոդվածը:

դրանքն ամրոզողովին ինքնուրույն է, թարգմանական հատվածներ չկան¹⁴,
ր) բաղդատելով «Պիտոյից գրքի» ընագրի մեծագույն՝ աչ թարգմանական
մասը (նախակրթությունները) Փիլոնի թարգմանությունների հետ և ցույց
տալով, որ այն բառացիորեն հեղեղված է վերջիններից քաղած բառերով¹⁵
(նորակազմ), արտահայտություններով, ընագրի մեծ ու փոքր հատվածնե-
րով¹⁶, Տվյալ դեպքում «Պիտոյից գրքի» ընագրի մեծագույն մասի ոչ թարգ-
մանական լինելու հանգամանքը որոշիչ կռվան է հանդիսանում փոխառու-
թյան ուղղությունը հաստատելու համար: Վերջին եզրակացությունը հնա-
րավորություն է տալիս վերանայելու այդ երկերի գրություն համեմատական
ժամանակագրությունը¹⁷:

Պետք է նշել, որ «Պիտոյից գրքի» հեղինակը՝ փոխառնելով Փիլոնի
(նաև այլ) թարգմանություններից մեծ թվով հունարանություններ, նրանց
կաղապարով նորակերտ բառեր է ստեղծել, հիմնականում բարդ, երբեմն՝
նախածանցավոր կամ վերջածանցավոր¹⁸:

Մեր ուսումնասիրության բուն նպատակին անմիջապես շառնչվող, սա-
կայն Փիլոն—«Պիտոյից գիրք» հարաբերության մասին պատկերացում կազ-
մելու համար կարևոր այս շեղումից հետո վերադառնանք վերը քննարկվող
Խորհնացու—Փիլոն—«Պիտոյից գիրք» հարաբերությանը. նշենք, որ վերջին-
ներից Խորհնացին փոխ է առել ոչ միայն ընագրի հատվածներ, այլև մի շարք
հունարանություններ (որոնք կազմում են նրա հունարան բառապաշարի
դրամ մասը)¹⁹, որոնք ա) կերտված են Փիլոնի թարգմանչի ձեռքով
(տե՛ս հավել. 1, 2), բ) վկայված են նաև «Պիտոյից գրքում» (հավել. 2),
գ) կերտված են «Պիտոյից գրքի» հեղինակի ձեռքով՝ ինչպես փիլոնյան նո-
րարանությունների նմանությամբ, այնպես էլ (վեց բառի դեպքում) հրա-
հանգների և նախակրթությունների վերնագրերի թարգմանության ընթաց-
քում (հավել. 3)²⁰:

14 Նույն տեղում, տե՛ս հատկապես էջ 115, 1, Գիրք պիտոյից, նույն տեղում:

15 Մեր կազմած ընդհանուր բառերի ցանկում առանձնացված են՝ ա) բարդ պատճենում-
ներ, բ) նախածանցավոր պատճենումներ, գ) նախածանցավոր բառերի բարդ եկիսապատ-
ճենումներ, դ) նախածանցավոր բառերի եկիսապատճենումներ՝ մակրայ պարունակող բա-
ռակապակցություններով, ե) նախածանցավոր տերմինների պարզ թարգմանություններ, գ)
վերջածանցավոր պատճենումներ, է) միայն Փիլոնի մոտ և «Պիտոյից գրքում» վկայված բա-
ռեր (որոնք պատճենում չեն), ը) իմաստային պատճենումներ և այլն. այդ ցանկն ընդգր-
կում է նաև այնպիսի հունարանություններ, որոնք հանդիպում են ավելի վաղ՝ «նախահունարան»
(Գրիգոր Նազիզնացու, Բարսեղ Կեսարացու երկերի), նաև Թրակացու «Քերականու-
թյան» և Ալեքսանդր Մակեդոնացու Վարքի թարգմանություններում, սակայն առանձին նշված են
Փիլոնի թարգմանչի նորակազմությունները. տե՛ս Գիրք պիտոյից, հավելված 5:

16 Տե՛ս Գիրք պիտոյից, ծանոթագրությունները և ներածական հոդվածը:

17 ԸՎՍ Ս. Արևշատյանի նրանք հայտնվել են հակառակ հաջորդականությամբ. տե՛ս
С. С. Арешатян. Формирование филологической науки в древней Армении (V—
VI вв.). Ереван, 1973, с. 149—150.

18 Ըստնվորապես՝ ալ վերջածանցով նորակազմությունների մասին տե՛ս Գ. Ս. Ասա-
տրյան. Գ. Ս. Մուրադյան. Գրաբարի՝ ալ անվանական վերջածանցը—«Պատմա-բա-
նասիրական հանդես», 1935, № 3, էջ 141 (3. 2 № 1), էջ 144 (4. 3):

19 Մեր ուսումնասիրության համաձայն Խորհնացու հունարան բառապաշարի առյուծի բա-
ծինը հունարան դպրոցի առաջին շրջանի (ինչպես և «նախահունարան») թարգմանություննե-
րից է սերում. բացառություն են կազմում երկրորդ շրջանի թարգմանություններում վկայված
հինգ-վեց բառ, որոնք լափաղանց սակավաթիվ են, որպեսզի նրա՝ այդ թարգմանություններից
օգտվելու ապացույց հանդիսանան:

20 Խորհնացու «Պատմության» բառապաշարի կապակցությամբ «Պիտոյից-Փիլոնյան այս
առանձնահատուկ բառերը» քննել է նաև Լ. Մանանդյանը (Խորհնացու առեղծվածի լուծումը.
Երևան, 1934, էջ 181—198), սակայն այդ քննությունը լրջորեն քննադատվել է ինչպես բա-
նասիրական «Խորհնացու» (Թ. Ավդալբեգյան. Խորհնացու «Պատմության» լեզուն

ինչ վերաբերում է այդ հուշարձանների թվագրմանը, այն կապված է հունարան դպրոցի կազմավորման և նրա գործունեության շրջանների թվագրման հարցի հետ, քանի որ երկուսն էլ հունարան դպրոցի գործունեության առաջին շրջանի արգասիք են:

Հունարան դպրոցի ժամանակի հարցը, երբեմն կապված հորենացու ժամանակի հետ, երբեմն էլ նրանից անկախ, նույնպես երկարատև վեճերի առարկա է եղել²¹։ Այժմ մեզանում տարածված տեսակետը, որի պաշտպանն էր նաև Մ. Աբեղյանը²², հիմնվում է հունարան դպրոցի երկրորդ շրջանի թարգմանություններից մեկի՝ Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» Գ. Տեր-Մկրտչյանի թվագրության վրա (480—484 թթ.)²³։ Հետևաբար, առաջին շրջանի գործերի համար այդ թվականները պետք է terminus post quem non հանդիսանան: Եվ իրոք, ըստ վերջին՝ Ս. Արևշատյանի²⁴ դասակարգման, նրանք պետք է գրված լինեն V դարի 50—70-ական թթ.: Իսկ ըստ Հ. Մանանդյանի²⁵ և նրա կողմնակիցների (Ն. Ակիսյան, Ե. Տեր-Մինասյան), Տիմոթեոսի երկի թարգմանությունն իրագործվել է 552—564 թթ. միջև: Այս տեսակետին են հարում նաև մերօրյա մի շարք հայագետներ²⁶: Սովորաբար երկու տեսակետի հետևորդներն էլ փորձում են իրենց դատողությունները ամրապնդել պատմական այս կամ այն դարաշրջանում «Հակաճառության» թարգմանության առավել կամ նվազ հավանականությամբ:

Սակայն հարցը պարզաբանելու մեկ այլ ճանապարհ էլ կա՝ մեզ հետաքրքրող հուշարձանների համար գտնել մեկ ուրիշ terminus post quem non, փնտրելով դրանց հետքերը ավելի հաստատուն թվագրված և, գերադասելի է, ինքնուրույն հուշարձանում:

Այդպիսի հուշարձան է Ղազար Փարպեցու «Պատմությունը», որ նա գրել է V և VI դարերի սահմանագլխին, և նրա «Թուղթը», որ շարադրված է «Պատմությունից» առաջ²⁷։ Այդօրինակ առնչության հնարավորության մասին ենթադրություն է առաջ քաշել Հ. Ղևին, սակայն ինքն էլ անմիջապես հերքել է այն²⁸։ Դա նրան հիմք է տվել Փիլոնի թարգմանությունները VI դարի առաջին կեսի գործ համարել: Նրա փաստարկները հետևյալն են. ա) Փարպեցին, շնայած դեպի հունական գիտելիքներն իր ունեցած հակմանը,

հունարան դպրոցի շրջանների կապակցությամբ.—Ք. Ավդալբեգյան. Հայագիտական հետազոտություններ. Երևան, 1969, էջ 112—131), այնպես էլ այն եզրակացությունների տեսակետից, որոնց հանգել է հեղինակը այդ քննության հիման վրա (Ստ. Մալխասյանց. Խորենացու առեղծվածի շուրջը. Երևան, 1940, էջ 76—84):

²¹ Հարցի պատմության ակնարկներ տե՛ս Ա. Մուրադյան. Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում. Երևան, 1971, էջ 76—111: С. С. Апревшатян. Указ. соч., с. 166—189.

²² Նշվ. աշխ., էջ 118—119:

²³ Գ. Տեր-Մկրտչյան. Տիմոթեոս Կուզի հայերեն թարգմանության ժամանակը.— «Արարատ», 1903, էջ 584—589:

²⁴ Указ. соч., с. 186.

²⁵ Հունարան դպրոցը..., էջ 101:

²⁶ Վերջին աշխատանքներից տե՛ս, օրինակ, G. Lafontaine, B. Coullie. La version arménienne des discours de Grégoire Nazianze.—Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 446. Louvain, 1983, p. 117. Դստ հեղինակների՝ Նադիանդացու թարգմանությունները (որոնք «նախահունարան» շրջանին են պատկանում) V դարի վերջի—VI դարի սկզբի գործ են: VI դարի առաջին կեսով են թվագրվում Փիլոնի թարգմանությունները Ա. Տերյանի կողմից՝ A. Terian. Philonis Alexandrini De animalibus. The Armentian Text with an Introduction, Translation and Commentary. Michigan, 1981, pp. 6—7.

²⁷ Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան. Տիպոյս, 1904:

²⁸ H. Lewy. The Pseudo-Philonic De Iona. London, 1936, p. 14.

Հունարան թարգմանությունների ազդեցությունը չի ենթարկվել, ք) նա իր «Թղթում» (էջ 192) թվարկում է միայն այն հույն հեղինակներին, որոնց թարգմանությունները «դասական» շրջանում են իրագործվել:

«Հունարան թարգմանությունների ազդեցությունը ենթարկվելու» տակ սովորաբար ենթադրում են տիպիկ «հունարան»՝ նախածանցավոր բառերի կիրառությունը, որն առկա է, օրինակ, հորենացու մոտ (այն էլ ոչ մեծ թվով, հմմտ. հավել. 1, 2, 3): Սակայն մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ Փարպեցու բնագրում առկա է 17 բառ, որոնք առաջին անգամ վկայված են Փիլոնի թարգմանություններում, և հունարենից պատճենված լինելով՝ կերտված են նրա թարգմանիչ ձեռքով (տե՛ս հավել. 4, 5): Այդ բառերից յոթը գտնում ենք նաև «Պիտոյից գրքում» (հավել. 5): Ինչպես վերև արդեն նշվեց, «Պիտոյից գրքի» հեղինակը նոր բառեր էր ստեղծում Փիլոնի (և այլ) թարգմանություններից քաղած նորակազմ բառերի նմանակությամբ: Ահա այդպիսի տասներկու բառ, որ առաջին անգամ ավանդված են «Պիտոյից գրքում», գտնում ենք նաև Փարպեցու մոտ (տե՛ս հավել. 6): Իհարկե, ինքնին այս վերջին բառերի առկայությունը ոչինչ չէր վկայի, և հնարավոր էր նաև հակառակ եզրակացություն հանգել, (որ Փարպեցուց են անցել «Պիտոյից գրքի» բնագրի մեջ), սակայն՝ ա) ինչպես արդեն նշվեց, վերոհիշյալ բառերը «Պիտոյից գրքի» բնագրի օրգանական մասն են կազմում և բազմաթիվ նույնօրինակ բառերից մի քանիսն են միայն, ր) բնական է ենթադրել, որ «Պիտոյից գրքը» գրվել է Փիլոնի թարգմանություններից ոչ շատ ժամանակ անց, գ) Փարպեցու մոտ գտնում ենք նրա ազդեցությամբ դրված.

ա) Փարպ. 30. 12. «Եւ կային շուրջ զծնօտիւք սկուտեղն անթիւ բազմութիւնք տղայոց արուաց, այլ սակաւ և իզաց. ամենեքեան պայծառացեալք և լուսազղեստլ՝ էին»:—Հմմտ. Պիտ. VII. 1. ժըշ «...սովաւ (խոսքը Յգիայի մասին է) անհասանելի երանութեան բարիք. լուսազղեստ մեծապայծառ փառաւորութեամբ լերինն դրեթէ տեսանելի և լուսալի արժանաւորացն տեսան, ծանօթացաւ»: Տե՛ս «լուսազղեստ» նաև՝ Պիտ. VIII. 5. ք (նույն ավետարանական դրվագն է՝ Մտթ. 17. 1—2, Մրկ. 9. 1—2, Ղուկ. 9. 28—33): բ) Փարպ. 12. 36. «...կարծէին... և աշխարհի բարւոյ իմիք լինել շինութեան սլաճաճառ» (հմմտ. էջ 96. 1):

Այսպիսով, հորենացու աղբյուրների թվին պատկանող Փիլոնի թարգմանություններն անկասկած, իսկ «Պիտոյից գրքը»՝ ամենայն հավանականությամբ, գոյություն ունենին արդեն V դարի վերջերին, հետևաբար, աճում է նրանք՝ 50—70-ական թթ. գրված լինելու հավանականությունը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Փիլոն Ալեքսանդրացու թարգմանությունների նորաստեղծ բառերը՝ էտրենացու քնագրում

- անեղ 3. 62—Փիլ. ժ բան²⁰ 233—VII. 28. ἀγένετος
 աստուածաստեղծ 1. 4 — Փիլ. Ել. 1. 20, բագն. 219, լին. 1. 36. աստուածաստեղծեմ — VII. 302. θεο-λατρεω
 արդարաբան 1. 18 — Փիլ. Յովն. 589. արդարաբանութիւն — [δικαιοιογία?] արփայագնաց 3. 55 — Փիլ. Լիւս. 142 արփեգնաց լինիմ — [αιθεροβατεω?] արփային 3. 62—Փիլ. ժ բան 234—VII. 28. αἰθεριος, լին., Ել.

²⁰ Փիլոնի երկերի վերնագրերի հապավումները տրվում են ըստ «Նոր հայկազան բառարանի»՝ աե՛ս նոր բառերը Հայկազան լեզուի. հ. 1, Երևան, 1979, էջ 20, էջերը (կամ գրիպն ու պարբերությունը)՝ ըստ հետևյալ հրատարակությունների. Փիլոնի Երբայեցույ Մեկ-Նուրթիւն ձեռագրը և իւրից (գիրք, պարբերություն), Հաւք Ի Սամփոն, Ի Յովնան (էջ). աշխատ-

- աւելագործ 2.68 — Փիլ. լին. 4. 240, իմաստ. 38 աւելագործութիւն — VI. 14.
 περιεργία
 գերապանծ 2.67 — Փիլ. հլ. 1. 15, բազն. 203. գերապանծութեան բարձ-
 րութիւն — VII. 268. ὑπέραυχον ὕψος
 թշնամակամ 3.64 — Փիլ. նիւ. 2. 90.
 ինքնահաճ 3.68 — Փիլ. բազն. 206 — VII-276 αὐθιαδής
 ինքնանամ 3.62 — Փիլ. նիւ. 2. 78
 ինքնասիրութիւն 2.64 — Փիլ. հլ. 2. 3, ժ բան 242, բազն. 219 — VII. 42. 302.
 φιλαυτία
 ծովագնաց 2.12 — Փիլ. հլ. 2. 55 ծովագնացիկ [θαλασσοπόρος?]
 համաբարոյ 3.68 — Փիլ. հլ. [ὁμογυθής?]
 համանմանակի 3.65 — Փիլ. բազն. 210 — VII. 232. ὁμοϊότροπος
 հարցասիրութիւն 1.8, 31 — Փիլ. լին. հարցասէր
 մերձադաւակ 3.65 — Փիլ. հլ. 2. 6, Լիւս. 148
 միապետեմ 1.9 — Փիլ. ժ բան 236 — VII. 30. μοναρχέω
 մօտասեր 3.65 — Փիլ. հլ. 2. 6, Լիւս. 148
 յառաջամասն 3.65 — Փիլ. հլ. 2. 27
 նոյնասերմանք 3.65 — Փիլ. հլ. 2. 6
 շատաշուր 3.59 — Փիլ. իմաստ. 68 — VI. 68. εὐσῶος
 ստիխասէր 3.64 — Փիլ. նիւ. 2. 90 [φίλεχθρος]
 շահաբերապէս 3.62 — Փիլ. նիւ. 2. 49. շահաբեր
 ստորնակային 3.65 — Փիլ. հլ. 2. 117, 119. ստորնակ
 փորագրեմ 3.68 — Փիլ. ժ բան 236 — VII. 30. ἐγχαράσσω
 քաշխտհ 1.19 — Փիլ. նիւ. 2. 69 — εὐθυσίος
 քաշամատն 3.55 — Փիլ. հլ. 2. 38 [εὐδ᾽αχτύλος?]

2. Փիլոն Ալեքսանդրացու նորաստեղծ բառերը (վկայված նաև «Պիտոյից գրքում»)՝ Խորենացու բնագրում

- ամենիմաստ 3.68 — Փիլ. իմաստ. 36 — VI.10. πάνσοφος, լին. 4. 124, հլ. 2.
 31, Պիտ.³⁰ II. 2. գ, VI. 1. դ. VII. 4. ժը
 աշխարհավարեմ 2.77 — Փիլ. հլ. 1. 1, Պիտ. IV. 1. բ. աշխարհավար, X. 1.
 աշխարհավարութիւն

տասիրութեամբ Մկր. Ալեքրեանց. Վենետիկ, 1826; Փիլոնի Երբայեցւոյ Ա. Բ. Յաղագս նա-
 խախնամութեան (գիրք, էջ), Գ. Յաղագս կենդանեաց (էջ), աշխատասիրութեամբ Մկր. Ալ-
 քրեանց. Վենետիկ, 1822; Փիլոնի շեքրայեցւոյ ճառք որոց հելլեն բնագիրք հասին առ
 մեզ, Վենետիկ, 1892 (էջ); Վերջիններից քաղած բառերի հունարեն համապատասխանները բեր-
 վում են ըստ՝ P h i l o. In ten volumes, with English Translation by F. H. Colson,
 G. H. W h i t a k e r, Cambridge (Mass.). London. 1958—1978 (նշվում է հատորը, էջը): Նրբե-
 մքն վկայաւորվում է նաև Իրեննոսի «Ընդդէմ ներձուածոց» երկի թարգմանութիւնը (Irenaeus
 gegen die Häretiker. Entdeckt von K. Ter-Mekertschian, E. Ter-Minassiantz. Leipzig,
 1910. նշվում է էջը), քանի որ այն իրագործված է նույն՝ Փիլոնի թարգմանչի ձեռագրի-
 տե՛ս F. Conybeare. The Age of the Old Armenian Version of Irenaeus.—«Յու-
 շարձան», Վիեննա, 1911, էջ 193—202; նաև՝ Ա. Վարդանյան. Կեղևական նմանութուններ
 Փիլոնի և Իրեննոսի հայ թարգմանութիւններու մեջ.— «Հանդես ամսօրյա», 1921, էջ 449—453:
³⁰ «Պիտոյից գրքի» բնագիրը վկայաւորվում է (նշվում է գիրքը՝ I, II..., նախակրթու-
 թիւնը՝ 1, 2..., գլուխը՝ ա, բ, գ...), ըստ Գիրք պիտոյից հրատարակութեան (տե՛ս ծան. 7.
 2. Մանանգյանի ցուցակներում վկայաւորված են Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ
 մատենագրութիւնը. Վենետիկ, 1843 հրատարակութեան էջերը, տե՛ս Հունաբան դպրոցը, էջ
 108, նույնը, հավանաբար, և Խորենացու առեղծվածի լուծումը գրքում):

- աստուածաճառք 3. 58 — Փիլ. նխ. 2. 72, Կլ. 1. 4 [ἑστὶν αὐτός?], Պիտ. II. 2. գ. 4. 7, IV. 2. դ. IX. 4
- արդաւանդահող 3. 59 — Փիլ. իմաստ. 68, շն.³¹ 277. — VI. 68. ὁ ἀποστόλος, Պիտ. VI. 2. ք. IX. 6
- բաղամարդութիւն 1. 8 — Փիլ. իմաստ. 69 — VI. 70. τὸ ἀποστόλων, Պիտ. IV. 2. 4
- բաղամարդութիւն 3. 68 — Փիլ. տեսական 16 — IX. 136, ժ բան 245 — VII. 48. τὸ ἀποστόλος, Պիտ. V. 2. 6
- բաղամարդութիւն 2. 89 — Փիլ. լին. 1. 11, ժ բան 76. բաղամարդութիւն — VII. 260. τὸ ἀποστόλος, Պիտ. IX. 1.
- բողոքական 3. 59 — Փիլ. Լիւս. 130, Պիտ. VII. 4. ք. բողոքականութիւն գեղջրուկ 1. 6, 12, 2. 8 — Փիլ. իմաստ. 79, 80 — VI. 88, 93. ἡ δὲ αὐτὴ, ալլար. 139 — I. 210, ժ բան 233 — VII. 28, Պիտ. V. 3, ժա, V. 4. ժը, VII. 3. ժը
- բնդդիմարանեմ 3. 65 — Փիլ. նխ. 2. 120. Պիտ. X. 1. ա [ἀντιλογεῖσθαι?]
- բնթագրեմ 3. 3 — Փիլ. նխ. 2. 113, Պիտ.³² X. բնթագրութիւն — A³³. 109. ἡ τὸ ἀποστόλος (բնթագրութիւն³⁴ բառի տարբերակն է՝ Փիլ., Պիտ. IV. 3 ա)
- բրաղդործեմ 1. 5 — Իրեն. հերձ. 7, Պիտ. V. 4. ժթ, IX. 2, X. 3. ք, ալլար. 130 — I. 194. τὸ ἀποστόλος
- լայնատարած 2. 76 — Փիլ. բազն. 205. լայնատարած արդակ — VII. 274, շտոճ Պիտ. X. I. ք, X. 3. ք
- կենցաղագրութիւն 3. 68 — Փիլ. տեսական 22, իմաստ. 59 — IX. 148, VI. 54. Եւ- փելիս, Պիտ. I. 5 ա, II. 1, II. 2, ա, II. 6. ք, IV. 3. ք, V. 4. Կ...
- համատեղեմ 2. 64 — Փիլ. տեսական 8. համատեղեմիկ — IX. 118. ἡ δὲ αὐτὴ, Պիտ. IV. 2. ք, դ, X. 1. ա
- հետեակամարտ 1. 23 — Փիլ. լին. 1. 100. [πεζόμαχος?], Պիտ. IX. 3. հետեակամարտութիւն
- հրեշտակագնացութիւն 1. 14 — Փիլ. իմաստ. 50 — VI. 33. πρὸς βίαια, Պիտ. IX. 5. ժ
- ճարտասան 3. 53 — Փիլ. տեսական 14 — IX. 130. քիչար, Պիտ. VII, X
- մասնատր 2. 23, 3. 10 — Փիլ. քհ. 186 — VII. 162. ὁ κατὰ μέρος, ժ բան 227 — VII. 14. ὁ ἐν μέρος, 236 — VII. 32. ὁ ἐπὶ μέρος, Պիտ. IV. 4. ք, V. 3. ք, VI. 3. ք, VII. 1., VII. 1. ժը, VIII. 1. ա, VIII. 5. ա
- միջօրեայ 1. 16, 2. 13, 3. 46 — Փիլ. լին. 4. 1, իմաստ. 64 — VI. 62. μεσημέριον, Պիտ. V. 2. ժդ
- լաւտախաղաց 3. 62 — Փիլ. իմաստ. 73, 74 — VI. 78. ἀποστόλος, 78. ἀέννος, Պիտ. II. 2. ք, II. 7. ք, VIII. 7. ք. IX. 6
- նազելի 3. 65 — Փիլ. իմաստ. 82 — VI. 94. σελήνη, Պիտ. V. 5. ժա
- նախամարգարէ 3. 37 — Փիլ. լին. 1. 86, Պիտ. II. 2. դ. II. 7. դ, V. 1. ա, V. I. Խ, IX. 2
- ներքողական 1. 3 — Փիլ. իմաստ. 88 — VI. 104. ἐγκωμιστικὸς, Պիտ. II
- շարասէր 1. 16 — Փիլ. իմաստ. 14, 38 — VI. 84, 94. ἐπιπονήγος, Պիտ. IV. 4. ք

³¹ Շն. — «Յաղագս թլ ոչ շնայցես». տե՛ս Փիլոնի Հեթրայեցոյ ճառք որոց հելլեն բնագիրք տասն առ մեք, էջ 268—284. Նշը-ում հանդես է գալիս որպէս «ժ բան»՝ հմտ. «Յաղագս տասն բանից», տե՛ս նուրն տեղում, էջ 220—267:

³² Բնդդիմած Պիտ. նշանակում է, որ բառը վկայված է թարգմանական հատվածում:

³³ A—Aphthionii Progymnasmatata.—Cl. Walz. Rhetores Graeci (in 9 tomo), t. I, Stuttgart, 1832, pp. 15—120 (նշված է էջը):

³⁴ Հստ չք. Աճառչանի ենթ- հունարան նախածանցը գոյացել է ընդ- դասական նախ- ծանցից (Հայերեն արմատական բառարան. հ. 3, Երևան, 1977, էջ 445, ս. Վ. «Ենթարդ»): Բնթ- տարբերակը, մեր կարծիքով, անցման օղակ է այդ երկուսի միջև՝ ընդ- ընթ- ենթ-:

վարժարան 2. 26 — Փիլ. նիւ. 2. 108, Պիտ X. 2. [γυμνάσιον?]
 քաջամտութիւն³⁵ 3. 53 — Փիլ. լին. 4. 175, Պիտ. I. 3 դ. քաջամիտ
 քաջասուն 2. 54 — Փիլ. նիւ. 2. 118, Իմաստ. 33. քաջասուն — VII. 4. εὐφροσύνη,
 Պիտ. V. 3. Ժգ
 քաջուսումն 3. 54 — Փիլ. լին. 4. 207, Լիւս. 127. [εὐμαθής?], Պիտ. VII. 5. Գ.
 քաջուսումնութիւն
 օղազնաց 2. 59 — Փիլ. Լիւս. 146, տեսական 20 — IX. 144. ἀετιόμορος, Պիտ. II.
 6. Գ, V. 3, Ժա. V. 5. Ժ, VII. 1. Ժէ, VII. 3. Ժդ, VII. 6. Ժա

3 Վերը բերածների նմանակութեամբ «Պիտոյից գրքի» հեղինակի ստեղծած
 (նաև բարգմանական հատվածներում վկայված) բառերը՝
 Խորհնացու բնագրում

ապագայ 3. 68 — Պիտ. VIII. 2. Գ
 արտասանութիւն 2. 89 — Պիտ. IX — A. 103, 104. ἔκφρασις
 բազմաձեռն 3. 25 — Պիտ. II. 6. «բազմաձեռն դօրութիւն» — Nik.³⁶ 278. χεῖρες
 πύλαι (բառացի՝ «բազմաթիվ ձեռքեր», այսինքն՝ «մեծ դօրութիւն»)
 բազմասերմ 1. 2 — Պիտ. IV. 2. Բ. բազմասեր
 դեղեցկադիմակ 2. 78 — Պիտ. IV. 1. Բ. գեղեցկադիմութիւն
 ընդդիմամարտ 3. 3 — Պիտ. II. 5. Գ, IV. 3. Բ, V. 2. Գ, VI. 1. ԺԲ, VI. 3.
 ԺԹ, VIII. 1. [ἀντιμαχός?]
 խեղդամահ 3. 14 — Պիտ. II. 3. Գ.
 ծաղկակալ 1. 55 — Պիտ. V. 5. Ժա
 կարեկցութիւն 3. 65 — Պիտ. IV. 2. Գ [συμπάθεια?]
 ձիավարեմ 2. 76 — Պիտ. V. 4. Գ
 միջերկրեայ 2. 24, 3. 5 — Պիտ. VIII — A. 102. ἡπειρώτης, VIII. 7
 միայնամարտութիւն 2. 67 — Պիտ. III. 3. Գ, V. 1. Ժա, VIII. 3 [μονομαχία?]
 յելուզակ 3. 44, 45, 2. 13, 14, 15 — Պիտ. VI. 1. Ե
 նորահրաշ 2. 33 — Պիտ. VII. 1-Բ, VII. 4 Ժէ, VIII. 5. Բ, IX. 2
 շրջակայ 1. 13, 15 — Պիտ. X — A. 109. περιστασις
 սիրելի 1. 28 — Պիտ. I. 2 — Lib³⁷. 63. φίλος «ընկեր, բարեկամ» (իմաս-
 տային պատճենում է)
 վերադէտ 3. 51 — Պիտ. VI. 1. ա, Ժ. վերադիտեմ
 փառամոլ 3. 63, փառամոլութիւն 2. 89 — Պիտ. VI. 2. ա. փառամոլիմ
 փոխարկութիւն 1. 1 — Պիտ. X. 1.
 քաղաքական 1. 3 — Պիտ. X — A. 108. πολιτικός

4. Փիլոն Ալեքսանդրացու բարգմանութիւնների նորաստեղծ բառերը՝
 Ղազար Փարպեցու բնագրում

ամենընկալ 195 11³⁸ — Փիլ. ալլաբ. 125 — I. 184. πανόχρηστος
 ամենասքանչ 203. 28 — Փիլ. [πανθυσιαστός?]
 անանուն 193. 6 — Փիլ. [ἀνωνυμος?]

³⁵ «Քաջամտացի» վկայված է մի հին պատահիկում՝ Մաշտոցի անվ. Մատենադարան
 № 1411, տե՛ս Ս. Քոչանյան. Մովսես Խորենացու նորահայտ երկաթագիր պատահիկը. —
 «Բանբեր Մատենադարանի», 4, 1958, էջ 1—2, սյուն. 2, 9—10 (մնացած ձեռագրերում և
 տպագրերում՝ «քաջ հմտացեալ»)։

³⁶ Nik.—Nikolai Myrensis Progymnasmata.—Ch. Walz. Rhetores Graeci, t. I, pp.
 262—420.

³⁷ Lib.—Libanii Progymnasmata. Libanii opera, Bd. VIII. Ed. Foerster, Lipsiae
 1915.

³⁸ Նշվում է էջը և տողը ըստ 1904 թ. հրատարակության, տե՛ս ծան. 27։

**К ВОПРОСУ О ДАТИРОВКЕ ДВУХ ИСТОЧНИКОВ
МОВСЕСА ХОРЕНАЦИ**

Г. С. МУРАДЯН

Резюме

Для разрешения проблемы датировки «Истории Армении» Мовсеса Хоренаци, ставшей предметом многолетних споров, необходимо уточнить время написания его источников. В настоящей статье речь идет о памятниках, созданных на первом этапе деятельности грекофильской школы—переводах трудов Филона Александрийского и «Книге хрий», частично переведенного с греческого учебника риторики. Их датировка варьируется с 450—470-х годов (С. Аревшатян) до середины VI века (А. Манандян, Е. Тер-Минасян и др.). Здесь предпринята попытка показать, что «Письмо к Ваану Мамиконяну» и «История Армении» Лазара Парбеци (конец V в.) может послужить *terminus post quem* для их написания, так как они содержат ряд калек с греческого, созданных либо рукой переводчика Филона, либо же во многом подражавшего последнему и создавшего множество неологизмов по образцу названных калек автора «Книги хрий». В свете полученных данных переводы Филона несомненно, а «Книга хрий» с большой степенью вероятности были написаны во второй половине V века.